

Սահմանափակ Երաշխիք

Research In Motion ՄՊԸ-ն (RIM), արտադրող և իր դուստր ձեռնարկության միջոցով, Research In Motion ՄԹ ՄՊԸ, Ընկերություն No. 4022422, որի իրավաբանական հասցեն է` Centrum House, 36 Station Road, Egham, Surrey, UK, TW20 9LF, BlackBerry Լուծման մատակարար, որն ընդգրկում է BlackBerry-ի Ձեռքի սարքը (որը BlackBerry-ի Լիցքավորման տակդիրի հետ միասին կազմում է BlackBerry-ի Սարքաշարը), BlackBerry-ի Սեղանի Ծրագրաշարը և համակցված անլար տվյալների ծառայությունը և փաստաթղթերը, երաշխավորում է Ձեզ՝ վերջնական օգտվողին (Դուք), որ BlackBerry-ի Սարքաշարը գերծ կլինի պատրաստման և նյութերի անսարքություններից Ձեր կողմից, որպես իրական վերջնական օգտվողի, BlackBerry-ի Սարքաշարը գնելուց հետո մեկ (1) տարի ժամանակահատվածում (Երաշխիքային Ժամկետ): Այս Սահմանափակ Երաշխիքը հնարավոր չէ փոխանցել: Երաշխիքային Ժամկետի ընթացքում BlackBerry Սարքաշարը, կամ BlackBerry Սարքաշարի մեկ կամ ավելի բաղադրամասեր, կվերանորոգվի կամ կփոխարինվի RIM-ի հայեցողությամբ՝ չզանձելով Ձեզանից գումար մասերի կամ աշխատանքի դիմաց: Եթե BlackBerry-ի Սարքաշարը (կամ դրա բաղադրամասը) վերանորոգվում կամ փոխարինվում է Երաշխիքային Ժամկետում, ապա Երաշխիքային Ժամկետը կսպառվի վերանորոգումից կամ փոխարինումից հետո 91^{րդ} օրը լրանալուն պես, կամ իրական գնումից մեկ տարին լրանալուց հետո: **Խնդրում ենք դիմել Ձեր BlackBerry-ի Ձեռքի սարքի Օգտվողի Ձեռնարկում նշված հրահանգներին՝ տեղեկանալու համար, թե ինչպես ստանալ տեխնիկական աջակցություն Ձեր BlackBerry-ի Սարքաշարի համար:**

Այս Սահմանափակ Երաշխիքը չի կիրառվում սովորական մաշվածության նկատմամբ, կամ եթե BlackBerry Սարքաշարի որևէ բաղադրամաս բացված կամ վերանորոգված է որևէ մեկի կողմից, ով լիազորված չէ RIM-ի կողմից, ինչպես նաև չի ընդգրկում BlackBerry որևէ Սարքաշարի վերանորոգումը կամ փոխարինումը վնասվածքի պատճառով, որն առաջացել է սխալ օգտագործման, խոնավության կամ հեղուկների, տաքությանը ենթարկվելու կամ մոտ լինելու, վթարի, չարաշահման, անփութության, սխալ կիրառման կամ ոչ RIM-ի կամ իր լիազորված տեխնիկական սպասարկման ներկայացուցչի կողմից կատարած վերանորոգման կամ կերպավորման անսարքությունների հետևանքով: Այս Սահմանափակ Երաշխիքը չի հատուցում BlackBerry Սարքաշարի մակերեսի ֆիզիկական վնասվածքը՝ ներառյալ ՀՔՑ վրա առաջացած ճաքերն ու խազվածքները: Այս Սահմանափակ Երաշխիքը չի կիրառվում BlackBerry Սարքաշարից բացի որևէ այլ սարքի նկատմամբ, ինչպես սահմանված է այս Սահմանափակ Երաշխիքում կամ արտաքին սարքավորումների կողմից հասցված որևէ վնասվածքի նկատմամբ: Այս Սահմանափակ Երաշխիքը նաև չի կիրառվում, եթե թերի աշխատանքը հանդիսանում է BlackBerry-ի Սարքաշարի հետ համատեղ RIM-ի կողմից չտրամադրված կամ հստակ չհաստատված պիտույքների, ապրանքների, ծառայությունների կամ օժանդակ, կամ արտաքին սարքավորումների կիրառման արդյունք, ուր նշված է RIM-ի կողմից, որ նման թերի աշխատանքը տեղի է ունենում ոչ BlackBerry-ի Սարքաշարի մեղքով: Ի լրումն, Սահմանափակ Երաշխիքը կարող է լինել անվավեր, իսկ եթե նույնիսկ ոչ անվավեր, ապա այն կարող է չկիրառվել, եթե թերի աշխատանքը պայմանավորված է օգտվողի կողմից BlackBerry Սարքաշարը, BlackBerry Սեղանի Ծրագրաշարը, և համակցված անլար տվյալների ծառայությունը և փաստաթղթերը (BlackBerry Լուծում) ընդգրկող BlackBerry Լուծման փաթեթում պարունակվող անվտանգության տեղեկատվությանը չհետևելու հանգամանքով: Ենթադրվում է, որ տվյալների պահուստավորումը BlackBerry Սարքաշարն օգտագործողի պարտավորությունն է: RIM-ը պատասխանատու չէ տվյալների համար, որ հնարավոր է վնասվեն կամ կորցվեն յուրաքանչյուր պահի՝ ներառյալ առանց բացառության տվյալների կորուստը կամ վանսվելը BlackBerry Սարքաշարի սպասարկման ընթացքում կամ համաժամացման ծրագրաշարի կիրառման միջոցով: Նույնիսկ եթե անլար տվյալների որևէ ծառայություն տրամադրվում է որպես BlackBerry Լուծման մի մաս RIM-ի կամ RIM-ի վերավաճառողի միջոցով երրորդ կողմի մատակարարի կամ շարժական կապի օպերատորի օժանդակությամբ, RIM-ը չի կարող երաշխավորել կամ երաշխիք տալ, որ անլար տվյալների ծառայությունը միշտ հասանելի կլինի կամ միշտ պատշաճ կգործի: Դուք պետք է դիմեք ձեր շարժական կապի օպերատորին՝ տեղեկանալու համար, թե ինչպիսի երաշխիքներ և ծառայությունների մակարդակներ են նրանք առաջարկում BlackBerry Լուծման հետ մեկտեղ: Այս և այլ պատճառներով չպետք է ապավինել BlackBerry Լուծմանը արտակարգ կամ կյանքին վտանգող, կամ ծայրահեղ կարևոր իրավիճակներին վերաբերող տվյալների փոխանցման հարցում, և RIM-ը իր և իր վերավաճառողների անունից հրաժարվում է պատասխանատվություն կրել այն դեպքերի կամ վնասների համար, որոնք

առաջանում են Ձեր կողմից BlackBerry Լուծման օգտագործման ժամանակ անլար տվյալների ծառայության աշխատանքին կամ հասանելիությանը ապավինելու կամ դրա ձախողվելու արդյունքում՝ ներառյալ, առանց սահմանափակման, ծառայության ծածկույթի բացակայությունը այն տարածքում, որտեղ Դուք ցանկանում եք օգտագործել BlackBerry Լուծումը:

BLACKBERRY-ի ՍԱՐՔԱՇԱՐԻ ԿԱՍ ՎՆԱՍՎԱԾ ԲԱՂԱԴՐԱՄԱՍԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄԸ ԿԱՍ ՓՈԽԱՐԻՆՈՒՄԸ ԲԱՑԱՌԻԿ ՄԻՋՈՑ Է, ՈՐԸ ՏՐԱՄԱԴՐՎՈՒՄ Է BLACKBERRY SOLUTION-ի ԳՆՄԱՆ և ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ շԵՏ ՀԱՄԱՏԵՂ: RIM-ը ԻՐ, BLACKBERRY ԼՈՒԾՄԱՆ ԻՐ ԴԻՍՏՐԻԲՅՈՒՏՈՒՄՆԵՐԻ և ՎԵՐԱՎԱՃԱՌՈՂՆԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ RIM-ի ԿԱՍ RIM-ի ԴՈՒՍՏՐ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԿԱՍ ՀԱՄԱՏԵՂ ՎԵՐԱՀՄԿՈՂ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ (ՀԱՎԱՔԱԿԱՆ՝ RIM ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՒՄԲ՝ ԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆ՝ RIM ԽՄԲԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ) ԱՆՈՒՆԻՑ ՍՈՒՅՆՈՎ ՀՐԱԺԱՐՎՈՒՄ Է ԲԱՑԱՀԱՅՑ ԿԵՐՊՈՎ ԱՐՏԱՀԱՅՑՎԱԾ ԿԱՍ ԵՆԹԱԴՐՎՈՂ ՈՐԵՎԷ ՏԵՍԱԿԻ ԱՅԼ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻՑ, ՊԱՅՄԱՆՆԵՐԻՑ, ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ, ՀԱՍՏԱՏՈՒՄՆԵՐԻՑ ԵՎ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ՝ ՆԵՐԱՌՅԱԼ, ՍԱԿԱՅՆ ՉՍԱՀՄԱՆԱՓԱԿԵԼՈՎ, ՊԻՏԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՈՐԵՎԷ ԵՐԱՇԽԻՔՈՎ, ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ՈՐԱԿՈՎ, ԲԱՎԱՐԱՐ ՈՐԱԿՈՎ, ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՍՊԵՑԻՖԻԿ ՊԻՏԱՆԵԼԻՈՒԹՅԱՄԲ ԿԱՍ ՆՊԱՏԱԿՈՎ, ԱՆՎԱՆՄԱՄԲ, ԱՐՏՈՆԱԳՐԻ ՉԽՍԽՏՄԱՄԲ, ԿԱՍ ԱՅԼ ԿԵՐՊ ԱՌԱՋԱՑՈՂ ՕՐԵՆՔՈՎ, ԿԱՍ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ, ԿԱՍ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԿԱՐԳՈՎ, ԿԱՍ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ՍՈՎՈՐՈՒՅԹՈՎ: ՁԵՐ՝ ՈՐՊԵՍ ՍՊԱՌՈՂԻ, ՊԱՐՏԱԴԻՐ ՕՐԻՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՉԵՆ ԱԶԳՈՒՄ ԱՅՆ ԴԵՔՈՒՄ, ԵՐԲ ԴՈՒՔ ՈՒՆԵՔ ՆՄԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ԻՐԱՎՈՒՆՔ:

ՈՉ ՄԻ ԴԵՊՔՈՒՄ RIM-ը ԿԱՍ RIM ԽՄԲԻ ՈՐԵՎԷ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՉԻ ԿՐՈՒՄ ՈՐԵՎԷ ԱՆՈՒՂՂԱԿԻ, ՊԱՏԱՀԱԿԱՆ, ՀԱՏՈՒԿ ԿԱՍ ԿՈՂՄՆԱԿԻ ՎՆԱՄՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ (ՆԵՐԱՌՅԱԼ, ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ, ԳՈՐԾՆԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ, ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՏՄԱՆ, ԳՈՐԾՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՍ ԱՅԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿՈՐՄՏԻ ՉԵՏԵՎԱՆՔՈՎ ԳՈՅԱՑԱԾ ՎՆԱՄՆԵՐԸ)՝ ԱՌԱՋԱՑԱԾ ԾՐԱԳՐԱՇԱՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՍ ՇԱՀԱԳԱՈՐԾՄԱՆ ԱՆԿԱՐՈՂՈՒԹՅԱՆ ՉԵՏԵՎԱՆՔՈՎ, ՆՈՒՅՆԻՄԿ ԵԹԵ RIM-ը ԵՎ/ԿԱՍ RIM ԽՄԲԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂՅԱԿ ԵՆ ՊԱՀՎԵԼ ՆՄԱՆԱՏԻՊ ՎՆԱՄՆԵՐԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ: ԱՅՍ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄԸ ԿԻՐԱՌՈՒՄ Է ԵՆԹԱԴՐՈՒՄ ԵՎ ՉԻ ԿԻՐԱՌՎՈՒՄ ԱՆԿԱԽ ԱՅՆ ԲԱՆԻՑ, ԱՐԴՅՈՔ ՆՄԱՆ ՎՆԱՄՆԵՐԸ ՊԱՀԱՆՋՎՈՒՄ Է ՓՈԽՀԱՏՈՒՅԵԼ, ՀԱՅՏԱՐԱՐԵԼ ԿԱՍ ԳՈՐԾԻ ԴՆԵԼ, ԿԱՍ ՕՐԻՆԱՋԱՆՑՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ՀԱՅՑԻ ԿԱՍ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ, ԿԱՍ ԵՐԱՇԽԻՔՈՒՄ ԳՏՆՎԵԼՈՒ, ԿԱՍ ՈՐԵՎԷ ԱՅԼ ՕՐԵՆՔԻ ԿԱՍ ՀԱՅՑԻ ՁԵՎԻ ԴԵՊՔՈՒՄ, ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՍԱՀՎԱՆ ԿԱՍ ԱՆՋԱԿԱՆ ՎՆԱՍՎԱԾՔ ՀԱՍՑՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ, ՈՐԻ ՀԱՄԱՐ ՈՉ ՄԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄ ՉԻ ԿԻՐԱՌՎՈՒՄ, RIM-ի, RIM ԽՄԲԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ և BLACKBERRY ԼՈՒԾՄԱՆ ՈՐԵՎԷ ԼԻԱԶՈՐՎԱԾ ԴԻՍՏՐԻԲՅՈՒՏՈՒՄԻ ԿԱՍ ՎԵՐԱՎԱՃԱՌՈՂԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՁԵՐ ՀԱՆԴԵՊ, ԸՍՏ ԱՅՍ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՁԵՐ ԿՈՂՄԻՑ ԿՐԱԾ ԿՈՐՄՏԻ ԿԱՍ ՎՆԱՍՎԱԾՔԻ ՀԱՄԱՐ, ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՌՄԱՄԲ ՉՊԵՏՔ Է ԳԵՐԱՋԱՆՑԻ ՎՆԱՍՎԱԾ BLACKBERRY ՍԱՐՔԱՇԱՐԻ ՓՈԽԱՐԻՆՄԱՆ ԱՐԺԵՔԸ: Այս Համաձայնագրում նշված որևէ կետ չպետք է դիտարկվի, որպես RIM-ի կամ դրա աշխատակիցների, կամ գործակալների ուղղակի անխիղճության արդյունքում մահվան կամ անձնական վնասվածք հասցնելու համար պարտավորությունը բացառող կամ բացառման փորձ կատարող կամ որևէ կերպ սահմանափակող:

BLACKBERRY ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅԱՆ ՍԵՐՎԵՐԻ ԾՐԱԳՐԱՇԱՐԻՆ, ՍԵՂԱՆԻ ԾՐԱԳՐԱՇԱՐԻՆ, BLACKBERRY ՍԱՐՔԱՇԱՐՈՒՄ ՏԵՂԱԴՐՎԱԾ ԲՈԼՈՐ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻՆ ԵՎ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԾՐԱԳՐԱՇԱՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ԵՐԱՇԽԻՔԸ ՇԱՐԱԴՐՎԱԾ Է ԱՌԱՆՋԻՆ ԾՐԱԳՐԱՇԱՐԻ ԹՈՒՅԼՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՋԱՅՆԱԳՐՈՒՄ, ՈՐԸ ՏՐԱՄԱԴՐՎՈՒՄ Է ՁԵՋ ԱՌԱՆՋԻՆ: ԱՌԱՆՋԻՆ ՊԱՏՎԻՐՎԱԾ BLACKBERRY ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՊԻՏՈՒՅՔԻ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ԵՐԱՇԽԻՔԸ ՆՈՒՅՆՊԵՍ ՇԱՐԱԴՐՎՈՒՄ Է ԱՌԱՆՋԻՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ԵՐԱՇԽԻՔՈՒՄ, ՈՐԸ ՈՒՂԵԿՑՈՒՄ Է ՆՄԱՆ ՊԻՏՈՒՅՔԸ:

RIM-ի կողմից պարտավորությունների չկատարման կապակցությամբ պահանջներ ներկայացնելուց հրաժարականը չի դիտարկվի որպես շարունակական հրաժարական նման կամ որևէ այլ պարտավորությունների չկատարման կապակցությամբ պահանջներ ներկայացնելուց:

Այս Սահմանափակ Երաշխիքը կառավարվում է մեկնաբանվում է համաձայն Անգլիայի և Ուելսի օրենքների՝ բացառությամբ օրենքի որևէ մարմնի, որ զբաղվում է օրենքի կոնֆլիկտների կառավարմամբ: Այս Սահմանափակ Երաշխիքի կողմերը (միասին՝ Կողմեր՝ և առանձին՝ Կողմ) համաձայնում են, որ Ապրանքների Միջազգային Վաճառքի Պայմանագրերի վերաբերյալ Միացյալ Ազգերի Կոնվենցիայի կիրառումը այս Սահմանափակ Երաշխիքի նկատմամբ ամբողջությամբ բացառվում է: Այս Սահմանափակ Երաշխիքից բխող կամ դրա հետ կապված բոլոր անհամաձայնությունները և վեճերը պետք է վերջնականապես լուծվեն միջնորդ դատարանի միջոցով: Միջնորդ դատավորի որոշումը լինելու է վերջնական և պարտադիր Կողմերի համար (բացառությամբ եթե տեղի է ունեցել բացահայտ սխալ): Միջնորդ դատավորի որոշումը պետք է կատարվի գրավոր և լինի հիմնավորված: Միջնորդ դատավորի որոշումը պետք է դրույթներ սահմանի Կողմերի կողմից միջնորդ դատարանի ծախսումների վճարման վերաբերյալ այնպիսի համաչափերով, որոնց նպատակահարմարությունը կորոշի միջնորդ դատավորը: Եթե Ձեր իրավասության ներքո գտնվող օրենքով որևէ այլ ձևով արգելված չէ, ապա միջնորդ դատը պետք է՝ (i) անցկացվի Լոնդոնում, Անգլիայում; (ii) վարվի Անգլիայի օրենի շրջանակներում; (iii) վարվի անգլերեն լեզվով; (iv) լուծվի Միջազգային Առևտրային Պալատի (Կանոնների) Միջնորդ Դատարանի Կանոնների շրջանակներում; և (v) լսվի վերոհիշյալ Կանոնների համաձայն նշանակված միջնորդ դատավորի կողմից, և փոխադարձ համաձայնեցվի Կողմերի կողմից միջնորդ դատավորի նշանակումից 30 օրվա ընթացքում, այդ համաձայնության ձևաչափի միջնորդ դատավորը պետք է առաջադրվի գրասենյակի Նախագահի կողմից Բրիտանական Համակարգչային Հասարակության (կամ Նախագահի կողմից իր փոխարեն գործելու նպատակով համապատասխան նշանակված անձի կողմից) միջնորդ դատի հայտի ներկայացման պահին յուրաքանչյուր Կողմի դիմումի ներկայացմամբ: Եթե վերոհիշյալ դատավճռի դրույթները արգելված են Ձեր իրավասության ներքո գործող օրենքով, ապա միջնորդ դատը պետք է՝ (i) անցկացվի Երևանում, Հայաստանի Հանրապետություն; (ii) լուծվի Հայաստանի Հանրապետության Առևտրի և Արդյունաբերության Պալատի Միջնորդ Դատարանի Կանոնների (Կանոններ) համաձայն; և (iii) լսվի Կանոնների համաձայն նշանակված միջնորդ դատավորի կողմից, և փոխադարձ համաձայնեցվի Կողմերի կողմից միջնորդ դատավորի նշանակումից 30 օրվա ընթացքում, որի ձևաչափի միջնորդ դատավորը պետք է նշանակվի երրորդ չեզոք կողմից: Առանց RIM-ի նախնական գրավոր համաձայնության Կողմերի միջև ոչ մի վիճաբանություն չի կարող միավորվել, կամ ձեզանից բացի որևէ այլ անձ չի կարող ներգրավվել որպես համահայցվոր:

Եթե այս Սահմանափակ Երաշխիքի դրույթը անվավեր է կամ իրավական ուժ չունեցող, ապա նման անվավերականությունը կամ իրավական ուժի բացակայությունը չպետք է անվավեր դարձնի կամ զրկի իրավական ուժից ամբողջ Սահմանափակ Երաշխիքը, այլ ավելի շուտ (եթե դրա արդյունքում տեղի չունենա դիտարկման ձևաչափում) Սահմանափակ Երաշխիքը պետք է մեկնաբանվի, որպես առանձին անվավեր կամ իրավական ուժ չունեցող դրույթ կամ դրույթներ չպարունակող, և յուրաքանչյուր Կողմի իրավունքներն ու պարտավորությունները պետք է մեկնաբանվեն և կատարվեն համապատասխանաբար:

Եթե այս Անսահմանափակ Երաշխիքը անգլերեն լեզվից բացի որևէ այլ լեզվով թարգմանվի, ապա անգլերեն լեզվով տարբերակը կհամարվի գերիշխող անգլերեն և թարգմանված լեզվի տարբերակների միջև իմաստային անհամապատասխանության կամ հակասության առկայության դեպքում:

Եթե առկա է որևէ անհամապատասխանություն այս Անսահմանափակ Երաշխիքի և BlackBerry-ի Սարքաշարի փաթեթավորման մեջ ընդգրկված որևէ երաշխիքի միջև, ապա նման անհամապատասխանության դեպքում գործում են այս Անսահմանափակ Երաշխիքի դրույթները:

© 2009 Research In Motion ՄՊԸ: Բոլոր իրավունքները պաշտպանված են: BlackBerry®, RIM®, Research In Motion®, SureType® և առնչվող ապրանքանիշերը, անվանումները և պատկերանշանները հանդիսանում են Research In Motion ՄՊԸ-ի սեփականություն և գրանցված են և/կամ օգտագործվում են ԱՄՆ-ում և աշխարհի մնացած երկրներում: